ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 57-L «13» դեկտեմբերի 2024 թ.

ԱՐԳԵԼՈՑՆԵՐԻ, ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Թանգարանների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-րդ մասի 14-րդ կետի պահանջով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել արգելոցների, արգելոց-թանգարանների և թանգարանների տարածքները վարձակալության տրամադրելու ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:

Recoverable Signature

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարի 2024 թ. N----------Լ հրամանի

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ԱՐԳԵԼՈՑՆԵՐԻ, ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ արգելոցների, արգելոց-թանգարանների և թանգարանների (այսուհետ՝ կազմակերպություն) տարածքներում (այսուհետ՝ տարածք) ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից մեկ միջոցառում կազմակերպելու համար վարձակալության տրամադրման հետ կապված գործընթացը:

2. Կազմակերպությունը տարածքը կարող է օգտագործման տրամադրել միայն համապատասխան վարձակալության պայմանագրի հիման վրա՝ գիտական, կրթական, մշակութային, կրոնական, ծիսական, զբոսաշրջային, ժամանցային, արարողակարգային և բնապահպանական նպատակներով, ինչպես նաև իրենց գործառնական նշանակությամբ:

3. Կազմակերպությունը տարածքը վարձակալության կարող է տրամադրել ֆիզիկական և իրավաբանական անձանց (այսուհետ՝ դիմումատու) կողմից ներկայացված դիմումի հիման վրա, որի ձևը հաստատում է կազմակերպության տնօրենը: Դիմումը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով: Դիմումի էլեկտրոնային տարբերակը պետք է տեղադրված լինի կազմակերպության կայքէջում:

4. Կազմակերպությունում դիմումը պետք է մուտքագրված լինի միջոցառման անցկացման օրվանից առնվազն 14 աշխատանքային օր առաջ, որում պետք է նշված լինի՝

1) դիմումատուի տվյալները՝ ֆիզիկական անձի դեպքում՝ բնակության վայրը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրը և հեռախոսահամարը,

2) միջոցառման նպատակը,

3) միջոցառման ժամկետները, անցկացման օրը, տևողությունը,

4) միջոցառման մասնակիցների թվաքանակը:

5. Դիմումին կից պետք է ներկայացվի նաև միջոցառման ծրագիրը, որում պետք է նշվի ծրագրի ընդհանուր նկարագրությունը:

6. Եթե միջոցառման ընթացքում վարձակալվող տարածքում պետք է օգտագործվեն դեկորացիաներ, սարք-սարքավորումներ, ժամանակավոր տաղավարներ, գովազդային պաստառներ և այլ պարագաներ, ապա սույն ընթացակարգի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված տեղեկույթից կամ փաստաթղթերից բացի պետք է ներկայացվի նաև վարձակալվող տարածքում դրանց տեղադրման սխեմա-քարտեզը, ամրացվող կոնստրուկցիաների գծապատկերներն ու ամրացման եղանակների մասին նյութերը:

7. Սույն ընթացակարգի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը պետք է հանդիսանան կնքվող պայմանագրի անբաժանելի մասը:

8. Սույն ընթացակարգի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված տեղեկույթից կամ փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում կազմակերպությունը 1 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուին տեղեկացնում է բացակայող տեղեկույթի կամ փաստաթղթերի մասին և առաջարկում է 2 աշխատանքային օրվա ընթացքում լրացնել դրանք:

9. Կազմակերպության տնօրենը սույն ընթացակարգի 6-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և (կամ) նյութերը ստանալուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հուշարձանների ոլորտը համակարգող Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին՝ համաձայնեցման: Նախարարի տեղակալը 2 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է իր համաձայնությունը կամ մերժում է այն՝ նշելով մերժման պատճառը:

10. Կազմակերպության տնօրենը 7 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուին գրավոր տեղեկացնում է դիմումի բավարարման կամ մերժման մասին: Դիմումը բավարարելու դեպքում՝ առաջարկում է կնքել համապատասխան պայմանագիր, իսկ մերժման դեպքում՝ նշում է մերժման պատճառը:

11. Մինչև վարձակալության պայմանագրի կնքումը կազմակերպության տնօրենը պարտավոր է դիմումատուին ծանոթացնել վարձակալվող տարածքի՝ հրդեհային անվտանգության կանոններին, հուշարձանի պահպանական գոտիների պահպանության ռեժիմին, պայմանակարգերին և այլ կանոններին:

12. Կազմակերպությունը վարձակալության պայմանագիրը կնքելուց հետո, բայց ոչ ուշ, քան միջոցառման օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում, պայմանագրի պատճենը պետք է ներկայացնի Հայաստանի Հանրապետության կրթության, մշակույթի, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության վարչություն:

13. Կազմակերպության տարածքում միջոցառումը կարող է անցկացվել աշխատանքային ժամերին՝ կազմակերպության բնականոն գործունեությունը չխաթարող պայմանների ապահովմամբ կամ ոչ աշխատանքային ժամերին կամ տոնական, հանգստյան օրերին:

14. Կազմակերպությունը վարձակալության պայմանագրում պարտավոր է սահմանել սույն ընթացակարգի 15-րդ կետով նախատեսված պարտադիր պահանջները և հսկողություն իրականացնել պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ:

2. ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

15. Կազմակերպությունը կնքվող վարձակալության պայմանագրում պետք է նախատեսի հետևյալ պարտադիր պահանջները՝

1) միջոցառման ընթացքում օգտագործել բացառապես դասական, հոգևոր, ազգային, ժողովրդական, ջազ, ռոք երաժշտություն և հեղինակային երգեր,

2) չխախտել հրդեհային անվտանգության կանոնները, հուշարձանի պահպանական գոտիների պահպանության ռեժիմը, պայմանակարգերը և այլ կանոնները,

3) պահպանել տարածքի մաքրությունը,

4) չիրականացնել այնպիսի գործողություն, որը խախտում, աղճատում, կամ նսեմացնում է հուշարձանի կամ դրա տարածքի բնապատմական, մշակութային, գիտական միջավայրը կամ սպառնում դրանց պահպանությանը,

5) արգելել բուն հուշարձանի և թանգարանի ցուցադրական տարածքներում սննդի օգտագործումը,

6) արգելել տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը՝ դրանց համար չնախատեսված վայրերում,

7) նախատեսել դրույթներ վարձակալման ստույգ ժամկետների, միջոցառման անցկացման օրվա, տևողության, մասնակիցների թվաքանակի վերաբերյալ,

8) նախատեսել պատասխանատվության վերաբերյալ դրույթներ պայմանագրային պարտավորությունները խախտելու կամ չկատարելու համար: